այլն։ Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակում է «Հայկական հեքիաթներ»-ի 10-ից ավելի հատորներ, որտեղ ընդգրկվում են Ե. Լալայանի հավաքած նյութերը։

Երվանդ Լալայանի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը և Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը։

Լ. Գ.

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ

1964 թ. դեկտեմբերի 4-ին Սովետական Հայաստանի գիտական հասարակայնությունը նշեց խոշոր գիտնական, ականավոր քիմիկոս, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արմենակ Լևոնի Մնջոյանի ծննդյան 60-ամյա և գիտա-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանը։

Ակադեմիկոս Մնջոյանի կյանքի և գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ քիմիական գիտությունների թեկնածու Հ. Ա. Հարոյանը։

Հարուստ և ուսանելի կյանքի ուղի է անցել հոբելյարը։ Նա ծնվել է 1904 թ. Ղարսի նահանգի Սարիղամիշ գյուղաքաղաքում՝ արհեստավորի ընտանիքում։ Առաջին համաշխարհային պատերազմը ստիպել է Մնջոյանների ողջ ընտանիքին թողնել հայրենիքը և տեղափոխվել Ալեքսանդրապոլ (այժմյան Լենինական), որտեղ պատանի Մնջոյանը աշխատանքի է անցել դեղատանը որպես աշակերտ։

1933 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, իսկ 1930 թ. Մոսկվայի քիմիո-ֆարմացեթիկ ինստիտուտը, Ա. Լ. Մնջոյանը իր ողջ գիտական գործունեությունը ծավալել է այդ երկու ուղղությունների շփման հատվածում՝ դեղագործական քիմիայի ասպարեզում։

Ա. Լ. Մնջոյանի նախնական գիտական աշխատանքները նվիրված են Հայաստանի բուսական ու հանքային հումքի և նրանցից անջատվող դեղամիջոցների ուսումնասիրմանը։ Հետագայում նա անցնում է ավելի լայն և ծավալուն հետազոտությունների, որոնց հիմնական նպատակն էր ուսումնասիրել օրգանական միացությունների քիմիական կառուցվածքի և նրանց բիոլոգիական ազդեցության միջև եղած կապը։

1937 թ. Ա. Լ. Մնջոյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Հայաստանի այրվող թերթաքարերը և նրանց կիրառությունը բժշկության մեջ» թեմայով, իսկ 1944 թ. դոկտորական դիսերտացիա՝ «Նյութեր տեղական անզգայացնող միջոցների սինթեզի վերաբերյալ» վերնագրով։ 1950 թ. նա ընտրվում է ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1953 թ.՝ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ։

Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի ղեկավարած ՀՍՍՌ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում խոշոր աշխատանքներ են տարվում հայրենական նոր դեղամիջոցներ ստեղծելու ուղղությամբ։ Ինստիտուտում նրա ղեկավարությամբ սինթեզված շատ պրեպարատներ արդեն կիրառվում են բժշկական պրակտիկայում և լայն ճանաչում են գտել ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս։

Արմենակ Մնջոյանի գրչին են պատկանում մոտ 200 գիտական աշխատանքներ։ Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ լույս է ընծայվում «Հետերոցիկլիկ միացությունների սինթեզները» ժողովածուն, որի արդեն հրատարակված պրակները արժանացել են սովետական և արտասահմանյան գիտնականների ուշադրությանը։

Երկար տարիներ Ա. Լ. Մնջոյանը ղեկավարել է Պետական համալսարանի և բժշկական ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնները։ Գիտա-մանկավարժական գործունեության

հետ մեկտեղ Ա. Լ. Մնոյանը կատարում է հասարակական մեծ աշխատանք, լինելով «Գիտելիք» ընկերության ակտիվ անդամ և ՀՍՍՌ խաղաղության կոմիտեի անդամ։

Հորելյարին մեծարելու էին եկել Հայաստանի դիտական և արդյունաբերական տարբեր հիմնարկների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Նրան ողջունեցին ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի նախագահությունը, ակադեմիայի քիմիական գիտությունների բաժանմունքի, առողջապահության մինիստրության, ՀՍՍՌ մինիստրների սովետի գիտական աշխատանքների կոորդինացման կոմիտեի, պետական համալսարանի, բժշկական ինստիտուտի, սինթետիկ կաուչուկի, պոլիվինիլացետատ գործարանի, մենդելևյան ընկերության, ՍՍՌՄ ԳԱ բնական միացությունների քիմիայի ինստիտուտի և շատ ուրիշ կազմակերպությունների ներկայացուցիչները։

Ընթերցվեցին հորելյարի անունով Սովետական Միության և արտասահմանյան տարբեր երկրների գիտնականներից ստացված բազմաթիվ հեռագրերը։

Վերջում շնորհակալական ջերմ խոսքով հանդես եկավ հորելյարը։

Լ. ԹՈՒՐՈՒԼԻ

* * *

Դեկտեմբերի 7-ին Արվեստի աշխատողների տանը կայացավ հանդիսավոր երեկո, նվիրված պարարվեստի խոշոր տեսաբան, ազգագրագետ, բանագետ, պատմական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ Սերուճի Ստեփանի Լիսիցյասի ծննդյան 70-ամյակին և գիտական-մանկավարժական գործունեության 50-ամյակին։



Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր Բ. Առաքելյանի ներածական խոսքից հետո լսվեց ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ս. Սրեմյանի զեկուցումը հորելյարի կյանքի և գործունեության մասին։

Ս. Ս. Լիսիցյանը ծնվել է 1893 թ. Թիֆլիսում, հայտնի մտավորականներ Լիսիցյանների ընտանիքում։ Սկզբնական կրթությունը ստացել է Թիֆլիսում։ 1911 թ. մինչև 1917 թ. նա ուսանել է Մոսկվայում, Գերյեի անվան կանանց բարձրագույն դասընթացների պատմա-փիլիսոփայական ֆակուլտետում, Ռ. Ս. Զերնեցկայայի պարի ստուդիայում և Օ. Է. Օզերովսկայայի դրամայի և արտահայտիչ խոսքի ստուդիայում։

Կրթությունն ավարտելուց հետո, 1917 թ. Ս. Լիսիցյանը վերադառնում է Թիֆլիս։ Այստեղ նույն թվականին նա հիմնադրում է արտասանության, ռիթմի և պլաստիկայի սեփական ստուդիա, ուր ծավալում է բեմադրական լայն գործունեություն, սկզբում բեմադրելով արևելյան պարեր և ապա՝ հայկական ազգային պարեր։ Ս. Լիսիցյանի ստուդիան 1920 թ. Վրաստանի լուսժողկոմատի կողմից վերակազմվում է ռիթմի և պլաստիկայի ինստիտուտի։ Մինչև 1930 թ. Ս. Լիսիցյանը Թիֆլիսում ապրում է բուռն ստեղծագործական, մանկավարժական կյանքով։ 1921—25 թթ. նա դասավանդում է Թիֆլիսի կոնսերվատորիայում, Թիֆլիսի ադրբեջանական թատրոնում բեմադրում է պարեր, կազմակերպում է պարային անսամբլ, որը հաջողությամբ ելույթներ է ունենում Անդրկովկասում, Մոսկվայում և արտասահմանում։

1930 թ. Ս. Լիսիցյանը հրավիրվում է Երևան, ուր ղեկավարում է խորեոգրաֆիկ դրպրոցը և միաժամանակ ավանդում տեսական և գործնական առարկաներ, գուգահեռաբար զբաղվելով գիտական աշխատանքով՝ Հայկական ՍՍՌ լուսժողկոմատի նյութական կուլտուրայի ինստիտուտում։

Երկար տարիներ զբաղվելով մանկավարժական-բեմադրական աշխատանքներով, Ս. Լիսիցյանը մշակում է պարի և ընդհանրապես

տարդու մարմնի շարժումները գրանցելու հատուկ սիստեմ, որով գրանցում է հայ ժողովրդական պարեր Հայաստանի տարբեր շրջաններում և Երևանում, Ս. Լիսիցյանի սիստեմը շուտով ճանաչում է գտնում մասնագետների շրջանում։ 1940 թ. լույս է տեսնում նրա այդ աշխատանքը՝ «Запись движения (кинетография)» վերնագրով, որը բարձր գնահատական է ստանում ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում։ Այդ աշխատության համար նա 1947 թ. ստանում է արվեստագիտության թեկնածուի աստիճան և դոցենտի կոչում։ 1938—1941 թթ. նա դասավանդում է Մոսկվայի Մեծ թատրոնում, գրում է հոդվածներ, պարի ձեռնարկ, զբաղվում է թարգմանչական աշխատանքով։

1942 թ. Ս. Լիսիցյանը դարձյալ վերադառնում է Երևան։ 1942 թ. մինչև 1959 թ. նա աշխատում է Ռ. Մելիքյանի անվան գիտական կաբինետում, որը հետագայում վերակառուցվում է Հայկական ՍՍՌ ԳԱ արվեստի սեկտորի և ապա՝ Արվեստի ինստիտուտի։ 1959 թ. Ս. Լիսիցյանը տեղափոխվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ուր և աշխատում է մինչև այժմ։

1945 թ. մինչև 1963 թ. Ս. Լիսիցյանը ղեկավարել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի բեմական շարժման և պարի ամբիոնը։

1958 թ. լույս է տեսնում Ս. Լիսիցյանի բազմամյա տքնաջան աշխատանքի արդյունքը հանդիսացող «Հայ ժողովրդական հինավուրց պարերն ու թատերական ներկայացումները» գրքի առաջին հատորը, որի համար նա 1959 թ. ստանում է պատմական գիտությունների դոկտորի աստիճան։ Այժմ Ս. Լիսիցյանը տպագրության է պատրաստում այդ աշխատության հաջորդ հատորները։

Հոբելյարին ողջունեցին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կոլեկտիվի, Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի, Հայկական պետական պատմական թանգարանի, Մատենադարանի, Երևանի պետական օպերայի, երաժշտական կոմեդիայի թատրոնի, Ս. Դ. Լիսիցյանի անվան դպրոցի, Լիսիցյան ստուդիայի նախկին սաների ներկայացուցիչները։ Ընթերցվեցին հոբելյարի անունով ստացված բազմաթիվ հեռագրերը՝ Միության տարբեր քաղաքներից։ Հրապարակվեց նաև Ա. Ի. Միկոյանի շնորհավորական հեռագիրը։

Շնորհակալական խոսքով երեկոյի վերջում հանդես եկավ հոբելյարը։

Ա. ՂԱԶԻՅԱՆ